

թե ինչպես դարերով նիրհող այդ լճի ջրերը աշխատեցնում են հզոր հիդրոէլեկտրակայաններ: Այդպիսի հաջողությունների կարելի է հասնել միայն այն դեպքում, երբ բանվորները և կոլտնտեսականները գիտնականների հետ աշխատում են սերտ համագործակցությամբ՝ ի բարօրություն Հայրենիքի: Հիանալի է, որ Հայաստանում գիտությունը այդքան մոտ է կանգնած կյանքին և թափանցում է ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառները:

Վերադառնալով հայրենիք, մենք լեհ գիտնականներին կպատմենք Սովետական Հայաստանի գիտնականների բեղմնավոր գործունեության մասին, լեհ ճարտարագետներին՝ կպատմենք Խոհանոցի շինարարության հզոր թափի մասին, լեհ բանվորներին՝ սովետական լինդոստրիալ ձեռնարկությունների առաջավոր տեխնիկայի մասին, այն մարդկանց մասին, որոնք չարձևել են այդ տեխնիկայի սերերը, լեհ գյուղացիների կպատմենք Հայաստանի խոշորացված կոլտնտեսությունների հիանալի նորակառույցների մասին, այն մասին, թե հայ գյուղի մարդիկ ինչպես են սովորում, աշխատում, սիրում դիտությունը և համագործակցում

գիտնականների հետ, արտիստներին և նկարիչներին կպատմենք հայ ժողովրդի ծաղկող արվեստի մասին, լեհ ուսանողներին՝ ուսման մեջ մեր նկատած ջանասիրության մասին, փակ մեր երեսաններին կպատմենք, թե ինչպիսի ուրախ և իսկական ստեղծագործական աշխատանք է եղում Երևանի Պիոներների պալատի բազմաթիվ խմբակներում: Մենք կպատմենք Սովետական Բանակի նախկին հայ ռազմիկների հետ ունեցած մեր հուզիչ հանդիպման մասին, այն Բանակի, որը մեր հայրենի Լեհաստանը ազատագրեց հիտլերյան լծից:

Մենք Սովետական Հայաստանից մեկնում ենք դեպի նրա ժողովուրդը տանեցած բարձր հարգանքի զգացմունքով, ժողովուրդ, որը սովետական համերաշխ ընտանիքում այդպիսի մակարդակի է հասցրել իր էկոնոմիկան ու կուլտուրան, մեր շնորհակալությունը հայտնելով նրան՝ որոշողին հյուրընկալության համար:

Լեհ-Սովետական բարեկամության ընկերության դեյեզացիան, որ բաղկացած է 12 մարդուց, դեկտեմբերի 23-ին Երևանից մեկնեց Մոսկվա:

ԺՈՐԺԻ ԱՄԱԴՈՒ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՍՀՆԱՂՈՒԹՅԱՆ ՈՒ ԲԵՐԿՐԱՆՔԻ ԵՐԿԻՐ Է՝

Ես տեսա Հայաստանի ժողովուրդին, որը կոմունիզմ է կառուցում: Եվ երբեք չեմ մոռանա այն օրերը, որ անցկացրեցի Երևանում, Հայաստանի աշխատավորների մեծ ընտանիքի հետ եղբայրական բարեկամությամբ: Այդ օրերին ես լավ իմացա, թե ժողովրդի համար ինչ է նշանակում լինել իր բախտի տերը, թե ինչ է նշանակում սոցիալիստական կարգը ազգի պրոգրեսի համար:

Այդ ժողովուրդը, որը անցյալում այնքան շատ պայքարել է ու տառապել, եղել է բազմադարյան դաժան ճնշման զոհ և ցրվել է ամբողջ աշխարհով մեկ, այդ ժողովուրդը Հոկտեմբերյան Մեծ ռեզոլուցիայի շնորհիվ նորից ձեռք բերեց անկախություն և հայրենի հողում իր կյանքը կառուցելու իրավունք: Ուստի և այնքան վառ են փայլում հայրերի աչքերը և ուրախության ժպիտով են լուսավորվում նրանց դեմքերը, երբ արտասանում են այնքան սիրելի Լենինի և Ստալինի

անունները, սոցիալիստական նոր աշխարհի ստեղծողների ու կառուցողների անունները: Վերջապես, հայ ժողովուրդը, ուսա ժողովրդի և սովետական մյուս ժողովուրդների օգնությամբ, կարողացավ խաղաղության մեջ կառուցել իր երջանիկ բախտը:

Այդ երկիրը, որը դեռ ոչ հեռավոր անցյալում ստրկացված էր և ավերված, ներկայումս բարձր ինդուստրիայի երկիր է և նրա գործարաններն ու ֆաբրիկաները վկայում են այն հսկայական փոփոխությունների մասին, որ տեղի են ունեցել վերջին երեսուն տարում: Դաշտերը, որ անցյալում լքված էին, այժմ հայրական կոլտնտեսությունների առատության դաշտեր են: Մարդիկ, որոնք անցյալում անգործ էին, սուզված գիշերային խավարի մեջ, այժմ այնքան բարձր և մարդասիրական կուլտուրայի տերեր են: Երկրի ներկվա հետամնացությունը այժմ պահպանվել է միայն որպես անցյալի տխուր հիշողություն: Այսօր կոմկոսսում բարձրանում է հզոր, առատ, կուլտուրական, ազատ Հայաստանը՝ սովետական ժողովուրդների խաղաղ ու երջանիկ կյանքի ակտիվ

1. Այս և հաջորդ գրությունների հեղինակները Հայաստան այցելած բրադիլիական պատվիրակության անդամներ են:—ԽՄԲ:

մասնակիցը: Այդ փոքրիկ երկիրը և նրա փառապանծ ժողովուրդը օրինակ են հանդիսանում ամբողջ աշխարհի համար: Դա այն պայծառ օրինակի մի մասն է, որ մեզ տալիս են սովետական ժողովուրդները:

Գործարաններում ես տեսա աշխատավորների, որոնք կառուցում են հայկական Հայրենիքի վեհօթյունը: Բայց նրանց ես տեսա նաև թատրոններում, գրադարաններում, կուլտուրայի ակումբներում՝ գրքերի վրա խոնարհված, կուլտուրական մակարդակը բարձրացնելիս, ֆիզիկական և մտավոր աշխատանքի միջև տարբերությունը վերացնելու

տավորներին, երբ նրանց շուրթերին ևս կիսադա ժպիտը:

Սվերդլովի անվան կուլտուրեսոթյունում ես տեսա կուլտուրեսականների, որոնք ընդմիջտազատված են կալվածատիրական-ֆեոդալական շահագործումից, որոնք հարուստ են մշակվող հողի անթիվ հարստություններով, ամբողջ սովետական հողի անսահման հարստություններով: Նրանք գիտակցում են, որ աշխատում են ամբողջ սովետական երկրի համար և որ Սովետական Միության բոլոր քաղաքացիները նույնպես աշխատում են իրենց համար:



Իրազրիլական պատվիրակությունը Ս. Էջմիածնի Մայր Տաճարի բակում

միջոցով դեպի կոմունիզմ ընթանալիս: Ամեն երեկո, երբ մենք վերադառնում էինք թատրոնից, ընթերիքի պահին մեզ սպասարկող մատուցողը մեզ հետ խոսում էր այն պիեսի, օպերայի կամ բալետի մասին, որ մենք տեսել էինք: Թատրոնը, օպերան, բալետը նրա համար սովորական երևույթ են, նրա առօրյա կյանքի մի մասը:

Իմ մտքերը սլանում էին դեպի բրազիլական աշխատավորները, որոնք մատնված են սովի, անգրագիտության, նողկալի շահագործման: Բայց կգա այն օրը, երբ նրանք ևս կկարողանան օգտվել կուլտուրայի բարիքներից, երբ նրանց սեղանը կլինի նույնպես առատ, ինչպես և Հայաստանի աշխա-

Ծիածան Հարությունյանի՝ այդ խնդուն գեղջկուհու կրծքին ես տեսա Լենինի շքանշան, գերազանց աշխատանքի մեդալ՝ բամբակ հավաքելու համար: Երբ նա յոթ տարեկան էր, տեղի ունեցավ Հոկտեմբերյան ռեզոլուցիան, որը փոխեց նրա վիճակը: Նթե շինեք այդ ռեզոլուցիան, ի՞նչ կարող էր ստատել նա, բացի հողի և ֆեոդալական-կալվածատիրական կարգերի ստրկի հաբատե տանջանքներից, հենց այն ստրկության, որից տառապել են իր նախնիները: Բայց Լենինը և Ստալինը փոխեցին նրա վիճակը, երբ ռուսական բանվորների գլուխ վաճառեցին՝ Պետրոգրադում վառեցին նոր դարաշրջանի արշալույսը: Եվ այսօր նա աշ-

րի ընկնող կին է՝ սովետական պարզեները իր կրծքին, և ընկերները հպարտանում են նրանով:

Ես խոսեցի Աղազարյանի հետ, որը նույնպես պարզեատուրված է Լենինի շքանշանով: Ընդամենը հինգ տարի առաջ նա նորից ձեռք բերեց իր Հայրենիքն ու աղատությունը: Փախչելով թյուրքական ճնշումից ու կոտորածից, նա թափառել է արաբական անապատներում, չունենալով ապաստան և աշխատանք: Ապա նա ապրել է Լիբանանում, որտեղ կյանքը ծանր էր և հաճախ ուտելու ոչինչ չէր լինում: Աշխատանքը ծանր բեռ էր, նրա պտուղները վաճելում էին մի բուռ հարուստ մարդիկ: Բայց 1947 թվականին Աղազարյանը վերջապես վերադարձավ իր հայրենիքը, — իր հեռավոր և ազատ Հայաստանը: Այժմ աշխատանքն արդեն ծանր բեռ չէ, նրա պտուղները վաճելում է ամբողջ հասարակությունը, իսկ բոլորի աշխատանքի պտուղները վաճելում է նաև Աղազարյանը: Նրա դեմքին այլևս չկա տանջանքների արտահայտություն: Նրա դեմքը փայլում է բերրությանից և նրա կրծքի Լենինի շքանշանը խոսում է իր կոլտնտեսության խաղողի այգիներում աշխատանքով մատուցած ծառայությունների մասին:

Ես նրան տեսա պարելիս ու երգելիս, ժպիտը դեմքին: Նա գիտե, որ աշխարհում չկա մի ուժ, որը կարողանա քայքայել նրա երջանկությունը, որ կառուցել են սովետական ժողովուրդները:

Ես տեսա սովետական գրողների, գրույց ունեցա միպասանների, բանաստեղծների, քննադատների հետ: Նույնպե՞ս թվում էր մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, որը անցյալում ապրել է տարագրության ու վշտի մեջ և որը իր ստեղծագործություններում արտացոլել է հայ ժողովրդի տառապանքները: Ներկայումս նա բերկրալի օրեր է ապրում՝ շրջապատված ժողովրդի սիրով: Առօր կուլտուրան Հայաստանում քչերի արտոնությունը չէ, ինչ-որ արժեքով բան չէ ժողովրդի համար: Նա այստեղ չի հալածվում ժողովրդին ծառայելու համար: Այժմ կուլտուրան պատկանում է ամենքին, և գրողները հանդիսանում են ժողովրդի մի մասը, նույն դաստիարակները: Նրանք կարողա՞ցն են, վերջապես, վերականգնել հայ գրականություն մեծ տրագիդիաներո նրա հետագա վեհաժաման ու բարձրագույն համար:

Հայաստանի գրողների միությունում ինձ եղբայրաբար ընդունած մարդկանց ալյ բերկրալի դեմքերը ինձ վրա թողեցին նույնպիսի տպավորություն, ինչպիսին ես ստանում եմ սովետական գրողների հետ ունեցած իմ ամեն մի հանդիպումից. վերջապես, գրականությունը հասել է իր լիակատար վե-

հույթյանը, վերջապես, գրողի միսյան ճիշտ է կատարվում:

Ես տեսա թատրոններ. «Օթելլո» ներկայացմանը բանվորները և գյուղացիները ծափահարում էին Շեքսպիրին, որ այնքան հիանալի էր, ինչպես այդ լինում է միայն սովետական բեմի վրա: Ես լսեցի ազգային օպերա, տեսա ժողովրդական պարեր կատարող գեղատաղանց պարողների և ես հասկացա, որ հայ ազգային կուլտուրան հաղթահարել է այն բոլոր արգելքները, որ կարող էին խանգարել նրա լիակատար ծաղկմանը: Սոցիալիզմը բարձրացրե և հարուստացրել է հայ ժողովրդի ազգային կուլտուրան: Հնաբան գիտնականները հողի տակից վերականգնում են Հայաստանի հազարամյա անցյալի էջերը, թանգարանները հարուստանում են, աճում է ամբողջ ժողովրդի կուլտուրան:

Մի՞թե կարելի է մոռանալ կոնսերվատորիա կատարած մեր այցելությունը:

Քննությունների ժամանակն էր և մի քանի ուսանողներ դաշնամուրի, ջութակի, թավջութակի վրա կատարում էին ազգային և արտասահմանյան կոմպոզիտորների ստեղծագործություններ: Այդ ուսանողները իրենց գեղարվեստական խորաթափանցությամբ ու երաժշտական ներազդագրության զարգացմամբ իրենք նմանվում էին դասախոսներին: Իմ դրանք աշխատավորների զավակներ են, ժողովրդի ծոցից ելածներ, որը դեռ ոչ հեռու անցյալում զրկված էր նման հնարավորությունից:


Սվերդլովի անվան կոլտնտեսությունում նախագահ Բաբաջանյանը հպարտությամբ պատմեց, որ այն գյուղից, որտեղ գտնվում է նրա կոլտնտեսությունը, սոցիալիստական կարգերի օրոք դուրս են եկել 12 բժիշկ, դանազան մասնագիտությունների 14 ինժեներ, 58 ուսուցիչ, 12 ագրոնոմ, մեկ ռեժիսոր և համալսարանի մեկ առո՞հուսո: Այդ գյուղի 69 պատանիներ սովորում են համալսարաններում: Կյանքը փոխվել է և նախագահի ձայնը հպարտ էր հնչում, երբ նա պատմում էր այդ փոփոխությունների մասին: Մի՞թե անցյալում կալվածատիրոջ կողմից շահագործվող գյուղացին կարող էր մտածել իր երեխաների համալսարանական կրթության մասին, երբ հաճախ տարրական դպրոցն անգամ մատչելի չէր նրանց համար:

Բայց ներկայումս, սովետական ժամանակներում, երկու դպրոցներ բավարարում են միայն այդ կոլտնտեսության երեխաների կարիքները և ալո դպրոցներից միայն մեկում աշխատում է 22 ուսուցիչ: Ես երջանիկ եմ, որ տեսա այդ վերափոխված կյանքը, տեսա դեպի կոմունիզմ ընթացող Հայաստանը:

Ես եկել եմ այստեղ որպես 13 բրազիլիացիներից բաղկացած ղեկավարի ղեկավար, որոնք պատկանում են սոցիալական տարբեր խավերի, տարբեր պարտիաների և կրոնական տարբեր աղանդների: Սակայն մեզ բոլորին միավորում է այն, որ մենք խաղաղության կողմնակիցներ ենք: Ես կարծում եմ, որ ես ղեկավարի բոլոր անդամների անունից կարող եմ ասել, որ աշխարհի ժողովուրդները կարող են խանգարել այն բանին, որ դուրսի՝ պատերազմի ձգտող արգահատելի պարոնները խախտեն հայ ժողո-

գային պառլամենտում հուլիսի մեր ասպետ՝ բրազիլիական ժողովրդի մեծ ղեկավար, Բրազիլիայի կոմունիստական պարտիայի գլխավոր քարտուղար Լուիս Կարլոս Պրեստեսը պնդում էր, որ բրազիլիական ժողովուրդը երբեք չի կռվի սովետական ժողովուրդի դեմ, երբեք զենք չի բարձրացնի փառապանծ Սովետական Միության դեմ, որը դեռ բոլորովին նորերս նացիզմի դեմ մղված պատերազմում մեզ փրկեց մահից և ստրկությունից:

Պրեստեսի այդ խոսքերը կրկնում են Բրա-



Բրազիլական պատվիրակությունը Զվարնոցում

վրդի խաղաղությունն ու բերկրանքը: Բրազիլիական ժողովուրդը, որը տառապում է և շահագործվում, զգում է մեր ժողովրդի երջանկության թշնամու՝ ամերիկյան իմպերիալիզմի ցինիկ և կոպիտ ճնշումը, որը կողոպտում է մեր հարստությունները, բրազիլիական ժողովուրդը պատերազմ չի ցանկանում և պայքարում է պատերազմի դեմ: Բրազիլիական զինվորները չեն մեկնի Կորեա՝ չնայած Ուլլ-ստրիտի մաքնասունների հայտարարություններին: Բրազիլիական զինվորները զենք չեն վերցնի, որպեսզի հարձակվեն աշխարհի որևէ ժողովրդի վրա, առավել ևս, որպեսզի հարձակվեն սովետական ժողովրդի վրա:

Արդեն 1946 թվականին Բրազիլիայի Ազ-

գիլիայի բոլոր հայրենասերները: Մենք սիր և վստահություն ենք տածում ղեպի սովետական ժողովուրդները, ղեպի հայ ժողովուրդը: Մենք կիսակենք ամերիկյան իմպերիալիստական մարդասպանների ճանապարհը, եթե նրանք համարձակվեն խախտել սովետական ժողովուրդների խաղաղությունն ու բերկրանքը, եթե հանդգնեն խախտել նրանց խաղաղ և ստեղծարար աշխատանքը:

Թող հայ ժողովուրդը երջանիկ ապրի սովետական մյուս ժողովուրդների հետ կողք կողքի, այն դրոշի ներքո, որը պարզեց լեները և՛ որն այնքան վեր բարձրացրեց Ստալինը, թող շարունակվի ժողովրդի հաղթական երթը ղեպի կոմունիզմի լուսաշող գրեթե: